

Հաստատված է Շամուտ համայնքի
ավագանու կողմից
13.07.2013թ. թիվ 18 որշում



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՒՌԻ ՄԱՐԶ

2013-2016 ՇԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԼԱՆ

Շամուտ 2013թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....	3-4
Համայնքի սոցիալ-տնտեսական գնահատականը.....	5-8
Խնդրի ճանաչում.....	9
Հեռանկար և խնդիրներ.....	9-12
Հավելված 1. Համայնքի պլանավորված բյուջե, իրական գներ և ծախսեր 2012 թվականի համար.....	11
Հավելված 2. Ժողովրդագրական տվյալներ.....	12
Հավելված 4. Հիմնական մշակարույների տարածքների կառուցվածքը.....	12
Հավելված 5. Հիմնական մշակարույների խառը բերքը և դրանց արտադրողականությունը.....	13
Հավելված 6. Անասնազլխաքանակը.....	13
Հավելված 7. Անասնապահության ծավալները և ԽԵԱ արտադրողականությունը.....	13
Հավելված 8. Ոչ գյուղատնտեսական աշխատանքներ.....	13

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Շամուտ համայնքի կայուն զրագացումն ապահովելու նպատակով գյուղի ավագանին 13.07.2013թ. թիվ 18 նիստի ժամանակ որոշեց մշակել համայնքի սեցիալ-տնտեսական զարգացման պլան գալիք 3 տարիների համար: Համայնքի զարգացման պլանի իրականացման արդյունավետությունը ավելացնելու և բնակչության ակտիվ մասնակցությունը երաշխավորելու նպատակով այս գործընթացում համայնքի տնտեսական զարգացման կոմիտե է ընտրվել համայնքի ընդհանուր նիստի ժամանակ, որը տեղի է ունեցել 24.04.2013թ.: Առաջարկված 7 թեկնածուներից թվով 7 ներկայացուցիչներ և համայնքի տարբեր սոցիալական խմբեր են ընտրվել բաց քվեարկությամբ, որպես ՀՏԶԿ անձնակազմի անդամներ համայնքի ընդհանուր նիստի ժամանակ /տես 1 աղյուսակ/:

Համայնքի տնտեսական զարգացման կոմիտեի անդամներ

Աղյուսակ 1. Շամուտ համայնքի տնտեսական զարգացման կոմիտեի անդամներ

Անուն, ազգանուն

պաշտոն/աշխատանքների ոլորտները

- | | | |
|--------------------|-----------------------------------|------------------|
| 1. Բաղիշ Վանյան | հանձ. Նախագահ/աշխատանքային ոլորտը | համայնքի ղեկավար |
| 2. Շենոյան Սեդա | քարտուղար | ուսուցիչ |
| 3. Ղազարյան Էդվարդ | անդամ | դպրոցի տնօրեն |
| 4. Քոչարյան Գագիկ | անդամ | տնտեսավար |
| 5. Աճեմյան Աստղիկ | անդամ | ուսուցիչ |
| 6. Շիմայան Գարեգին | անդամ | դպրոցի տնտեսավար |
| 7. Սարգսյան Մովսես | անդամ | անասնաբույժ |

Խորհրդատուներ

1. Ղազարյան Էդվարդ
2. Օհանյան Վազգեն



դպրոցի տնօրեն
մարզպետարանի աշխատակից

Համայնքի Սոցիալ-Տնտեսական Գնահատականը

Հարցումներ

Լոռու Մարզ: Լոռու մարզը տեղակայված է Հայաստանի Հանրապետության կյուսիսարևելյան մասում: Սահմանակից է Վրաստանի Հանրապետության հետ, ինչպես նաև ՀՀ Շիրակի, Տավուշի, Արագածոտնի, Կոտայքի մարզերին: Վանաձորը մարզկենտրոնն է: Այն ընդգրկում է Գուգարքի, Սպիտակի, Տաշիրի, Ստեփանավանի, Թումանյանի շրջանները: Մարզը ընդգրկում է 8 քաղաք՝ Վանաձոր, Ստեփանավան, Սպիտակ, Տաշիր, Ալավերդի, Թումանյան, Ախթալա, Շամլուղ և 105 գյուղական համայնքներ: Լոռու մարզի տարածքը բաղկացած է 3788 քմ կմ, որից գյուղատնտեսական հողատեսքերը 1849 քմ կմ /48%/: Մարզը զբաղեցնում է հանրապետության ամբողջ տարածքի 9.7%-ը: Բնակչությունը բաղկացած է 283.4 /01.01.2012թ. դրությամբ/: Հիմնականում զբաղվում են գյուղատնտեսությամբ: Մասնագիտացել են կարտոֆիլի, բանջարաբուստանային կուլտուրաների, անասնակերի արտադրության, անասնապահության, պտղաբուծության մեջ: Մարզում կա 7 պատմական հուշարձաններ:

Շամուտ համայնքը: Շամուտը հիմնվել է 1850թ.: Տեղակայված է մարզի կյուսիսարևելյան մասում, ծովի մակրենույթից բարձր է 1650մ, 200կմ հեռու է մայրաքաղաքից և 60կմ մարզկենտրոնից: Համայնքի բնակչությունը կազմում է 334 մարդ 01.01.2013թ. դրությամբ, որից 186-ը կանայք, 148 տղամարդիկ: Համայնքի ադմինիստրատիվ տարածքը 1573.6 հեկտար է, որից գյուղատնտեսական նշանակության հողերը 777 հեկտար /49.3%/:

Համայնքի մասին ավելի մանրամասն տեղեկությունները տրված են կից հավելվածներում:

Տեղական կառավարություն

Գյուղապետը Բ.Վանյանն է: Նա ընտրվել է հոկտեմբերին 2012թ. անցկացված ընտրությունների ժամանակ 1 թեկնածուով: Համայնքի խորհուրդը բաղկացած է 5 անդամներից և ընտրվել է 2012թ. հոկտեմբերին: Գյուղապետը ստեղծել է 4 անդամներից բաղկացած անձնակազմ՝ գյուղապետ, քարտուղար, հաշվապահ, հավաքարար: Գյուղապետարանը վերանորոգման անհարաժեշտություն ունի: Տեխնիկական առումով այն անմխիթար վիճակում է: Այն ունի երեք տարվա զարգացման պլան, որը հաստատվել է 2012թ. նոյեմբեր ամսին համայնքի ավագանու կողմից:

Համայնքի սեփականություն և բյուջե

Գյուղապետարանը համայնքի սեփականություն է: Համայնքի բյուջեն հիմնականում բաղկացած է հողի հարկից, գույքահարկից և պետական դոտացիայից: Բյուջեի եկամուտը բավականաչափ չի եղել 2012թ. համար, որովհետև այն իրականացվել է միայն 76%-ով:

Ժողովրդագրություն

Համայնքը ունի 97 ընտանիքներ: Ազգաբնակչության թիվը կազմում է 334 մարդ, որից 148-ը տղամարդիկ են և 186 կանայք: Մեծահասակների թիվը կազմում է 234 մարդ, որից թոշակառուներ 54 մարդ: Կան 3 միայնակ մայրերի, 12 բազմազավակ ընտանիքներ: Ազգաբնակչության միգրացիան կազմում է 11.5 %, որի հիմնական մասը կազմում է աշխատանքային միգրացիան:

Հողերի օգտագործումը

Համայնքի վարչական տարածքը կազմում է 1796.07 հեկտար է, որից գյուղատնտեսական նշանակության հողերը՝ 776.12 /49.4%, 0.45 հեկտարը կազմում են կացարանները, արդյունաբերական հողամասերը՝ 8.40 հեկտար, տրանսպորտի հողերը՝ 3.40 հեկտար, վարելահողերը՝ 207.25 հեկտար: Գյուղատնտեսական նշանակության հողամասերից 629 հեկտար /81%/ մասնավոր են, 148 հեկտար /19%/ համարվում են համայնքային սեփականություն:

Գյուղատնտեսություն

Սովետական ժամանակահատվածում կոլեկտիվ տնտեսությունը մասնագիտացել էր պտղաբուծության, բանջարաբուծության և անասնապահության մշակաբույսերի արտադրության մեջ: 1988թ. կոլեկտիվ տնտեսությունների վերաբերյալ տվյալները պահպանված չեն: Ներկայումս համայնքում առկա են 651 գլուխ խԵԱ, որից 292 գլուխ կով, 491 գլուխ ոչխար և այծ, 244 գլուխ խոզ և 387 թռչուն: 2012թ. արտադրվել է 30 տոննա միս, 400 տոննա կարտոֆիլ:

Ոչ գյուղատնտեսական աշխատանքներ

Համայնքի գյուղատնտեսական նշանակության աշխատանքները թույլ են զարգացած: Առկա է բուժկետ բուժքույրի առկայությամբ, դպրոց, գրադարան: 160 մարդ աշխատում են գյուղատնտեսության ոլորտում, որոնք կազմում են համայնքի աշխատունակ բնակչության 74 %-ը:

Խմելու և ոռոգման ջուր

Խմելու ջրի ներքին համակարգը ունի 4 կմ երկարություն և գտնվում է անմիջապես վիճակում /վերակառուցվել է 2003թ. /: Խմելու լճույրը մատակարարվում է 4 ջրամբարներից և շուրջօրյա է: Տներում ջրաչափեր տեղադրված չեն:

Կրթություն, առողջապահություն և մշակույթ

Համայնքում չկա մանկապարտեզի շենք: Դպրոցի պայմանները բավարար են, բայց անհրաժեշտ է կահավորել: Ջեռուցման համակարգը պետք է վերակառուցվի: Բուժկետը տեղակայված է գյուղապետարանի շենքում, պայմանները բավարար են, բայց կահավորման կարիք է զգացվում: Այն չունի անհրաժեշտ սարքավորումներ: Գրադարանի շենք չկա, այն նույնպես գտնվում է գյուղապետարանի շենքում:

Կենցաղի և ենթակառուցվածքների զարգացում:

Գազի հիմնական գիծը չի հասել համայնքին և գազաֆիկացման ներքին համակարգ չկա: Էլեկտրականության գծը ծանրաբեռնված է և մատակարարում է 6 գյուղեր, որը պատճառ է շատ վթարների: Բնակչությունը նետում է թափոնները որտեղ պատահի: Անհատական զուգարանները անբավարար պայմաններ ունեն, բացակայում է ջուրը և սանհանգույցի համակարգը: Փողոցներում լուսավորություն չկա:

Միջհամայնքային ճանապարհը վերանորոգման կարիք ունի: Գյուղը մայրուղուն կապող 30կմ ճանապարհը անմիջապես վիճակում է: Տրանսպորտային միջոցների մակարդակը բավարար է: Վանաձոր - Շամուտ համայնքի ավտոբուսը մտնում է գյուղ օրը 1 անգամ:

Կացարանների ռեսուրսները

Կացարանները զբաղեցնում են 4500 քմ տարածք: Համայնքի 4 ընտանիք 22 անդամներով չունեն բնակելի տուն:

Շրջակա միջավայրը, գվարճանքի տարածքներ

Համայնքում գվարճանքի տարածքներ չկան, կան անտառներ:

Իրավական հիմնավորում, հասարակական կարգի պահպանում

Համայնքի բնակչության համար գրեթե անհնար է հարևան քաղաքների շուկաներում առևտրի տեղեր գտնելը: Առևտրականները կարգավորում են գյուղատնտեսական արտադրության շուկաների կարգ ու կանոնը շուկայի աջակցության և շուկայի ադմինիստրացիայի համաձայնության շնորհիվ: Առևտրականները ստիպում են տնտեսություններին վաճառել գյուղատնտեսական մթերքները իրենց հարմար գներով:

Ուժեղ և թույլ կողմերի վերլուծություններ, հեռանկարներ և վտանգներ /SWOT/

Ուժեղ և թույլ կողմերի վերլուծությունները կատարվել են, որպեսզի բացահայտվի բոլոր ներքին և արտաքին, դրական և բացասական խնդիրները ըստ համայնքի սոցիալ-տնտեսական միջավայրի, որը բերված է ներքևում /աղյուսակ 2/:

Աղյուսակ 2. SWOT վերլուծություն /ուժեղ և թույլ կողմեր/

Ներքին գործոններ	
Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
1.խոտհարքների /401/ և արոտավայրերի /150/ առկայություն 2.բարենպաստ բնակլիմայական պայմանները 3.անտառային տարածքների առկայություն	1.գյուղմթերքների վերամշակման բացակայությունը 2.ներդրումների պակաս 3.գյուղ.տեխնիկայի պակաս 4.հողի որակական ցածր հատկանիշներ 5.ճանապարհների անմխիթար վիճակ 6.ամառանոցների կենցաղային վատ պայմաններ

Արտաքին գործոններ	
հնարավորություններ	վտանգներ
1. գյուղմթերքների արտադրություն 2.բնական արոտների և խոտհարքների ընդլայնում	1.կարկտահարություն, երաշտ 2.գյուղ.մթերքների ցածր գներ 3.արտագաղթ 4.դեմոգրաֆիա բացաս. բն. Աճ

Խնդրի բացահայտում

Սոցիալ-տնտեսական և ՄՈՏ-ի վերլուծությունների արդյունքում ներքոհիշյալ խնդիրներն են ճանաչվել որպես համայնքի խնդիրներ.

- 1.Կաթի վերամշակման արտադրամասի հիմնում
- 2.Ամառանոցների էլեկտրականության անցկացում
- 3.Համայնքը մայրուղուն կապող ճանապարհի վերանորոգում

Հեռանկար և խնդիրներ

Բացահայտված գլխավոր խնդիրների հիման վրա, ՀՏԶԿ-ն ձևակերպել է համայնքի հեռանկարը:

Հեռանկար

Գյուղմթերքների արտադրության ավելացում, կենցաղային պայմանների բարելավում շուկաների հետ կապի ապահովում:

Համայնքի զարգացման հիմնական խնդիրը և գլխավոր նպատակները որոշվել են ելնելով համայնքի հեռանկարից: Գլխավոր նպատակների իրականացումը շատ կարևոր են համարվում կապված հիմնական խնդրի հեռանկարի հետ: Նպատակները ճանաչվել են յուրաքանչյուր հիմնական նպատակի համար: Այս նպատակները կոչված են հիմնական նպատակի ընթրնման համար /Աղյուսակ 3/:

Աղյուսակ 3. Խնդիրներ

Հիմնական նպատակը	Գլխավոր նպատակը	Թիրախները
1.Ոչ գյուղատնտեսական գործունեություն	Կաթի վերամշակման արտադրամասի հիմնում	Բարձր եկամտի ստացում
2.Ենթակառուցվածքների զարգացում	Ամառանոցների էլեկտրականության անցկացում	Կենցաղային պայմանների բարելավում
	Ճանապարհների վերանորոգում	Շուկայի հետ կապի ապահովում

ՀՏԶԿ-ն դասակարգել է խնդիրները ըստ նպատակների, ճանաչել այլ նպատակներ, որ բխում են նպատակներից և առաջարկվող ծրագրերից, որի ընթրնումը կբերի խնդիրների լուծմանը/Աղյուսակ4/: Դրանից հետո, ՀՏԶԿ-ն խնդիրները դասակարգել է ըստ առաջնահերթության:Առաջնահերթությունների հիման վրա առաջարկ ծրագրերի իրականացման ժամանակ նույնպես որոշվել է դրանց առաջնահերթությունը: Հետո պատրաստվել է իրականացման պլանը /Աղյուսակ 5/: Առաջնահերթ առաջարկ ծածկագրերի ամփոփագրերը պատրաստվել են / կցված են/:

Աղյուսակ 4. Խնդրի դասակարգում և առաջարկներ

Նպատակներ	Խնդիրներ	Ծրագրի առաջարկներ
Գյուղատնտեսական զարգացում	Անասնապահության զարգացում	Կաթի վերամշակման արտադրամասի հիմնում
Ենթակառուցվածքների զարգացում	Ամառանոցների էլեկտրականության անցկացում	Ամառանոցների էլեկտրականության անցկացում 9կմ գեոավորություն
	Ճանապարհների վիճակի բարելավում	Համայնքը մայրուղուն կապող 30կմ նախկին ճանապարհի վերականգնում

ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ

Աղյուսակ 5. Իրականացման պլան

Ծրագրի առաջարկներ	Նախնական գներ /մլն.դրամ/	Ֆինանսական աղբյուրներ	Իրականացում		ՀՏԶԿ-ից պատասխանատու	Նշումներ
			սկիզբ	վերջ		
Կաթի վերամշակման արտադրամասի հիմնում	12.0	ԳԶՓԱԳԶԾ-85%, 10.200.0 ներդրում—15 % 1800.0	2013	2016	Բ.Վանյան	Շամուտ համայնքի էլեկավար
Ամառանոցների էլեկտրականության անցկացում	13.0	ԳԶՓԱԳԶԾ-85%, 11050.0 ներդրում—15 % 1950.0	2013	2016	Շեկոյան Սեդա	մատուցչուհի
Ճանապարհների վերանորոգում	18.0	ԳԶՓԱԳԶԾ-85%, 15300.0 ներդրում—15% 2700.0	2013	2016	Ղազարյան Էդվարդ	Կարոցի տնօրեն

Վերահսկում և ստուգայց

ՀՏԶԿ-ի յուրաքանչյուր անդամ պատասխանատու է յուրաքանչյուր ծրագրի առաջարկի համար և հաճախակի է ամիսը 4 անգամ ներկայացնում ծրագրի առաջընթացը համայնքի խորհրդին:

Յուրաքանչյուր կատարող պատասխանատու է աշխատանքների համար համայնքի խորհրդին ծրագրի իրականացման ընթացքում, ավարտից հետո ներկայացնում է հակիրճ հաշվետվություն իրականացված աշխատանքների, գների և վեճակալի արդյունքների վերաբերյալ:

Աղյուսակներ

Հավելված 1. Շամուտ համայնքի 2012թ. պլանավորված և իրական ֆինանսական մուտքերն ծախսերը:

h/h	Հոդված	Պլանավորված/Հազ.դրամ/	Իրական/Հազ.դրամ/
1	Հարկային եկամուտներ և տուրքեր		
	հողի հարկ	102463.0	18560.0
	գույքահարկ	529.0	174.0
	պետական տուրք	0	0
	տեղական տուրքեր	0	0
2	Ոչ հարկային եկամուտներ		
	Պահուստ.հողի վարձավճար	1500.0	625.0
	Գյուղի վարձակալ մրցույթներ	0	0
	Այլ ոչ հաշկային եկամուտներ	0	0
3	Պաշտոնական տրանսֆերտներ		
	Դոտացիա	3500.0	3500.0
	Այլ տրանսֆերտներ	0	0
	Ընդամենը	15772.0	6155.0
	Ծախսերն ըստ գործառնական դասակարգման		
	Տեղական ինքնակառավարման մարմինների պահպանում	13570.0	3780.5
	Կրթություն	0	0
	Սոցիալական ծրագրեր	1000.0	384.0
	Մշակույթ	0	0
	Բերակարգում	60.0	0
	Պահուստային ֆոնդի ձևավորում	362.7	0
	Նախորդ տարիների պարտքերի մարում	0	0
	Ընդամենը	14992.7	4164.5

**Աղյուսակ 2. Ժողովրդագրական տվյալներ
/01.01.2012թ. դրությամբ/**

h/h	Հոգի
Ընտանիքի քանակը	97
Բնակչություն, ընդամենը	334
Որից-տղամարդ	148
կին	186
Անչափահասներ	100
Չափահասներ	234
Որից-աշխատունակ	150
Ոչ աշխատունակ	30
Թոշակատուներ	54
Միայնակ մայրեր	3
Նպաստ ստացողներ ընտանիքներ	5
Բազմազավակ ընտանիքներ	12
Ժամանակավոր կացարաններում ապրող ընտանիքներ	4

Աղյուսակ 3. Գյուղատնտեսական հողեր

հողատեսքը	հեկտարը	Օգտագործվում է /հա/ 2012թ.
Գյուղատնտեսական հողեր	777	777
Վարելահող	208	8
Անթառամ բույսեր	0	0
Մարգագետին	401	601
արոտավայր	149	149

Աղյուսակ 4. Գլխավոր մշակաբույսերի տարածքների կառուցվածքը

	2012թ. /հա/
Ցորեն	0
Գարի	0
Բանջարեղեն	0
Կարտոֆիլ	8
Կերարույսեր	601
Եգիպտացորեն	0
Լոբի	0